նում, այնպէս և դարբանդցիք գնում են նշենիք փոխանակ դեղձի, և այս այգիները չինուած են տորոնի արտերի տեղերումն, և փոխանակում են տորոնեան եկամտոք, ըստ որում ինչպէս պատմում են, երբեմն 1840—1877 (յռուս տաճկական պատերազմն) նշանաւոր վաճառականութեան պատճառ է եղել Կովկասեան քաղաքացոց և ահագին գումարներ է տուել աշխատաւորաց, բայց ինչպէս յաւելով և հոգոց հանելով ասում են բագուեցիք, շամախեցիք, և մանաւանդ դարբանդցիք և գուբայեցիք, բայց 1877 թուիցը սկսած տորոնը վաճառականների տունը քանդեց, և շատ մարդկանց 30 հազար, 50 հազար և հարիւր հազար մանեթները տորոնի հետ մնացին գետնի տակին, ըստ որում յանկարծ տորոնի գինը կոտրուեց—փուքը 15 մանէթից իջաւ 2 3 մանէթ, որով և դադարեց իսպառ տորոնի առ ու տուրը։ Այժմ փոխանակ տորոնի լաւ մշակում են այգիներ և առատութեամբ ստանում են եկամուտը, ինչպէս այգեստէրերի խօսքերից էր երեւում, բաւական գոհ էին այգիներից, որ մոռանալ էին տուել դարբանդցոց տորոնի առ ու տուրն և օգուտը։ Այսպէս՝ թէ որ դարբանդցիք զրկուել են տորոնի օգուտից, որով հարստացել էին, ինչպէս իրենք էին ասում, բայց Աստուած խնայեց դարբանդցոց և ուրիշ միջոցաւ օգնեց, թէ և գոհարան և օրհնարան չեն Աստուծոյ տուած բարութեանց համար, ինչպէս իրենց ազգային գործոց մէջ երեւում էր, քանզի զպրոցի յարատեւութեան և բարեկարգութեան վրայ շատ թոյլ էին շարժում և անփոյթ ինչպէս յայտարարութեանս մէջ մանրամասն գրել եմ կաթուղիկոսին 1889 թուին։

Դարբանդ քաղաքի և շրջակայ գիւղերի, որպէս և Մոլլայ Խալիլի, Պողոս Բեանդի, և այլ գիւղերի մէջ բնակող հայ ժողովուրդը, ինչպէս պատմում են տեղացիք, 1800—1810 թուերին գաղթել են Անդրկովկասեան քաղաքներն և գիւղերն, որք են Ղզլար, Մոզդոք, Պետրովսկի, Մահաչ (սուրբ Խաչ քաղաք), որոց լեզուն, սովորութիւն և աւանդութիւն նոյն է, ինչ որ այսօր Դարբանդի, Խաչմասի, Քիլվարի և Մագրասայի հայոցն է, և այդ բոլոր գաղթած ժողովուրդը թեմ ու վի-